Արձանագրության 3

Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և փողոցների ճաքալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/82 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.03.2018թ.
Ժամը՝ 10:40

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ե. Կարապետյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել համապատասխան եզրակացություն:

Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/82» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

- Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին,

- Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Արխինէքս» ՍՊԸ	Բավարար

Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/82 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/82» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Արխինէքս» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և փողոցների ճաքալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Տ. Իգիթյան

Անդամներ՝ ..... Ե. Կարապետյան

..... Ա. Կիրակոսյան

..... Կ. Հարությունյան

..... Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան